ԴԵՂԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՐԱՀԱՆԳ
(ՆԵՐԴԻՐ-ԹԵՐԹԻԿ)
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՊԱՌՈՂԻ ՀԱՄԱՐ

Զիրտեկ

թաղանթապատ դեղահատեր 10 մգ

ցետիրիզինի դիհիդրոքլորիդ

Ուշադիր կարդացեք ներդիր-թերթիկն ամբողջությամբ՝ նախքան դեղի ընդունումը, քանի որ այն պարունակում է կարևոր տեղեկատվություն:

- Միշտ ընդունեք դեղը ներդիր-թերթիկի, բուժող բժշկի կամ դեղագետի հրահանգներին համապատասխան:
- Պահեք այս ներդիր-թերթիկը: Հնարավոր է այն կրկին կարդալու կարիք լինի:
- Եթե ունեք լրացուցիչ հարցեր, դիմեք բժշկի կամ դեղագետի:
- Եթե ի հայտ է եկել որևէ կողմնակի ազդեցություն, այդ թվում՝ նաև այնպիսինը, որը ներառված չէ այս ներդիր-թերթիկի «Ինչպիսի կողմնակի ազդեցություններ կարող են առաջանալ» 4-րդ բաժնում, ապա խորհրդակցեք բուժող բժշկի կամ դեղագետի հետ:
- Եթե դեղը երեք օր ընդունելուց հետո հիվանդության ախտանիշները վատթարացել են կամ չեն բարելավվել, դիմեք բժշկի:

Ինչ բովանդակություն ունի այս ներդիր-թերթիկը

1. Ինչ է Զիրտեկ դեղը և ինչի համար է այն օգտագործվում:
2. Ինչ պետք է իմանալ Զիրտեկ դեղն ընդունելուց առաջ:
3. Ինչպես ընդունել Զիրտեկ դեղը:
4. Ինչպիսի կողմնակի ազդեցություններ կարող են առաջանալ:
5. Ինչպես պահել Զիրտեկ դեղը:
6. Ինչ է պարունակում դեղի փաթեթը և այլ տեղեկություններ:

1. ԻՆՉ Է ԶԻՐՏԵԿ ԴԵՂԸ ԵՎ ԻՆՉԻ ՀԱՄԱՐ Է ԱՅՆ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՒՄ

Զիրտեկ դեղի ակտիվ բաղադրատարրը ցետիրիզինն է: Ցետիրիզինը պատկանում է «հակահիստամիններ» կոչվող հակաալերգիկ դեղերի խմբին:

Զիրտեկ դեղը կիրառվում է ալերգիկ վիճակները պայմանավորող այնպիսի ախտանիշների բուժման համար, ինչպիսիք են՝

- սեզոնային և շուրջտարյա ալերգիկ ռինիտի դեպքում՝ քթի և աչքերի հետ կապված ախտանիշները,
- քրոնիկական եղնջացանի դեպքում՝ ցանավորումն ու քորը:

2. ԻՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ ԶԻՐՏԵԿ ԴԵՂՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒՑ ԱՌԱՋ

Մի օգտագործեք Զիրտեկ դեղը, եթե

- ունեք **ալերգիա** (գերզգայունություն) ցետիրիզինի, հիդրօսիզինի, պիպերազինի ցանկացած ածանցյալի (այլ դեղերի նման ակտիվ բաղադրատարրեր) կամ Զիրտեկ դեղի ցանկացած այլ օժանդակ նյութի նկատմամբ (դրանք թվարկված են ներդիր-թերթիկի 6-րդ բաժնում),
- ունեք **երիկամների ծանր հիվանդություն** (երիկամների ֆունկցիայի ծանր խանգարում՝ կրեատինինի մաքրման ցուցանիշը ցածր է 10 մլ/րոպե ցուցանիշից),
- ընդունում եք այլ հակաալերգիկ դեղեր:

➔ Եթե կարծում եք, որ վերոնշյալ վիճակներից որևէ մեկը վերաբերում է Ձեզ, **մի օգտագործեք** Զիրտեկ դեղն առանց բուժող բժշկի հետ խորհրդակցելու:

Կիրառման հատուկ հրահանգներ և նախազգուշացումներ

Զիրտեկ դեղը կիրառելիս ցուցաբերեք հատուկ զգուշություն:

Զիրտեկ դեղն ընդունելուց առաջ խորհրդակցեք բուժող բժշկի կամ դեղագետի հետ.

- եթե ունեք **երիկամների հիվանդություն** (բուժող բժիշկը կարող է նվազեցնել Զիրտեկ դեղի դեղաչափը),
- եթե ունեք **միզարձակման դժվարություններ** կամ այնպիսի հիվանդություն, որն ամենայն հավանականությամբ անհնար է դարձնում դատարկել միզապարկը, օրինակ՝ **ողնուղեղի վնասվածք** կամ **շագանակագեղձի մեծացում**,
- եթե ունեք **էպիլեպսիա** կամ ցնցումների առաջացման բարձր ռիսկ,
- եթե հղի եք կամ կերակրում եք կրծքով (տես «Կիրառումը հղիության և կրծքով կերակրման շրջանում», 2-րդ բաժնում):

Զիրտեկ դեղը պարունակում է լակտոզա: Դեղի կիրառումը խորհուրդ չի տրվում գալակտոզայի նկատմամբ անտանելիություն, Լապպ-լակտազա ֆերմենտի անբավարարություն կամ, գլյուկոզայի կամ գալակտոզայի մալաբսորբցիայի համախտանիշ (հազվադեպ հանդիպող ժառանգական հիվանդություններ) ունեցող պացիենտների շրջանում:

➔ **Խորհրդակցեք բուժող բժշկի հետ**, եթե կարծում եք, որ վերոնշյալ վիճակներից որևէ մեկը վերաբերում է Ձեզ:

Երեխաներ

Խորհուրդ չի տրվում Զիրտեկ դեղի թաղանթապատ դեղահատերը կիրառել 6 տարեկանից ցածր երեխաների շրջանում, քանի որ այս դեղաձևը հարմար չէ դեղաչափի համապատասխան ճշգրտում իրականացնելու համար:

Զիրտեկ դեղի կիրառման ընթացքում

- Խուսափեք ալկոհոլի օգտագործումից:

- Ձիրտեկ դեղը կարող է ազդել Ձեր **ալերգիայի թեստի** արդյունքների վրա: Եթե պատրաստվում եք կատարել ալերգիայի թեստավորում, ապա խորհրդակցեք բուժող բժշկի հետ՝ թեստավորումից մի քանի օր առաջ Ձիրտեկ դեղի օգտագործումը դադարեցնելու անհրաժեշտության մասին:
- Դիմեք բուժող բժշկին, եթե ունեք բարձր ջերմություն (տենդ), դող կամ սարսուռ, հնարավոր է անհրաժեշտ լինի բուժման այլ տարբերակ:

Հատուկ ուշադրություն պահանջող վիճակներ
Ձիրտեկ դեղը կարող է խորացնել առկա որոշ հիվանդություններ կամ առաջացնել **ծանր ալերգիկ ռեակցիաներ** կամ **միզակապություն**: Ձիրտեկ դեղն ընդունող որոշ պացիենտների շրջանում կարող են առաջանալ ինքնասպանության մտքեր: Ձիրտեկ դեղի կիրառման ընթացքում ցանկացած խնդրի առաջացման վտանգը նվազեցնելու համար հարկավոր է հետևել որոշակի ախտանիշների: Տես **«Հատուկ ուշադրություն պահանջող վիճակներ»** 4-րդ բաժնում:

Ձիրտեկ դեղի և այլ դեղերի միաժամանակյա կիրառումը
Տեղյակ պահեք բուժող բժշկին կամ դեղագետին, եթե ընդունում եք կամ վերջերս ընդունել եք կամ պատրաստվում եք ընդունել որևէ այլ դեղ՝ ներառյալ առանց դեղատոմսի բաց թողնվող դեղերը:
Որոշ դեղեր կարող են ազդել Ձիրտեկ դեղի ազդեցության մեխանիզմի վրա և, ամենայն հավանականությամբ, կարող են նպաստել կողմնակի ազդեցությունների զարգացմանը: Ձիրտեկ դեղն իր հերթին նույնպես կարող է ազդել այլ դեղերի ազդեցության վրա: Այդպիսի դեղերից են՝.

- գլխուղեղի վրա ազդող դեղերը, օրինակ՝ **այլ հակահիստամինային դեղեր** (օրինակ՝ հիդրոքսիզին, կլեմաստին), **տագնապամարիչներ** (մասնավորապես՝ դիազեպամ), **քնաբերներ** (օրինակ՝ զոլպիդեմ) (Ձիրտեկի և գլխուղեղի վրա ազդող այլ դեղերի միաժամանակյա օգտագործումը կարող է հանգեցնել օրգանիզմի ռեակցիաների արագության լրացուցիչ նվազման և աշխատունակության անկման. տես «**Ձիրտեկ դեղի ընդունումը սննդի և ալկոհոլի հետ**»՝ 2-րդ բաժնում):

➔ **Եթե ընդունում եք վերոնշյալ դեղերից որևէ մեկը**, այդ մասին տեղեկացրեք բուժող բժշկին կամ դեղագետին:

Ձիրտեկ դեղի ընդունումը սննդի և ալկոհոլի հետ
Ձիրտեկ դեղի կիրառման ընթացքում խուսափեք ալկոհոլի օգտագործումից: Զգայուն պացիենտների շրջանում Ձիրտեկ դեղի և ալկոհոլի միաժամանակյա օգտագործումը կարող է հանգեցնել օրգանիզմի ռեակցիաների արագության լրացուցիչ նվազման և աշխատունակության անկման:
Կիրառումը հղիության և կրծքով կերակրման շրջանում
Խորհուրդ չի տրվում Ձիրտեկ դեղը կիրառել հղիության շրջանում:

- Տեղեկացրեք բուժող բժշկին, **եթե հղի եք** կամ պլանավորում եք հղիություն:
- Տեղեկացրեք բուժող բժշկին, **եթե հղիացել եք Ձիրտեկ դեղի կիրառման շրջանում**:

Զիրտեկ դեղի կազմում առկա նյութերը կարող են ներթափանցել կրծքի կաթ: **Եթե կերակրում եք կրծքով,** նախքան Զիրտեկ դեղն օգտագործելը **խորհրդակցեք բուժող բժշկի հետ:**

Ազդեցություն ուշադրություն պահանջող գործողությունների վրա (փոխադրամիջոցների վարում, սարքավորումների հետ աշխատանք)

Քիչ հավանական է, որ Զիրտեկ դեղը թույլատրելի դեղաչափերով ընդունելիս կարող է ազդել փոխադրամիջոցներ վարելու և բարդ մեխանիզմերի հետ աշխատելու կարողությունների վրա: Այնուամենայնիվ, Զիրտեկ դեղն օգտագործելիս որոշ պացիենտների մոտ կարող է առաջանալ քնկոտություն, հոգնածություն կամ թուլություն (տես **«Ինչպիսի կողմնակի ազդեցություններ կարող են առաջանալ»** 4-րդ բաժինը):

- **Մի վարեք մեքենա և մի աշխատեք բարդ մեխանիզմների հետ**, եթե համոզված չեք, որ դեղը չի ազդել Ձեր ռեակցիաների արագության և աշխատունակության վրա:

3. ԻՆՉՊԵՍ ԸՆԴՈՒՆԵԼ ԶԻՐՏԵԿ ԴԵՂԸ

Ինչ դեղաչափով ընդունել Զիրտեկ դեղը

Միշտ ընդունեք Զիրտեկ դեղն այս ներդիր-թերթիկին, բուժող բժշկի կամ դեղագետի ցուցումներին խիստ համապատասխան: Եթե համոզված չեք, թե ինչպես պետք է դեղն ընդունել, խորհրդակցեք բուժող բժշկի կամ դեղագետի հետ:

Մի գերազանցեք թույլատրելի դեղաչափը:

Մի օգտագործեք Զիրտեկ դեղը 7 օրից ավելի տևողությամբ՝ առանց բուժող բժշկի կամ դեղագետի հետ խորհրդակցելու:

- **Դիմեք բժշկի,** եթե Ձեր ախտանիշները վատթարանում են կամ չեն թեթևանում դեղի կիրառումից 3 օր անց:

Զիրտեկ դեղի կիրառումը 12 տարեկանից բարձր երեխաների և դեռահասների շրջանում

Զիրտեկ դեղի թույլատրելի դեղաչափը 10 մգ (մեկ դեղահատ) է՝ օրական մեկ անգամ:

Զիրտեկ դեղի կիրառումը 6-12 տարեկան երեխաների շրջանում

Զիրտեկ դեղի թույլատրելի դեղաչափը 5 մգ (կես դեղահատ) է՝ օրական երկու անգամ:

Զիրտեկ դեղի կիրառումը 2-6 տարեկան երեխաների շրջանում

6 տարեկանից ցածր երեխաների շրջանում խորհուրդ չի տրվում կիրառել Զիրտեկ դեղի թաղանթապատ դեղահատեր, քանի որ այս դեղաձևը հարմար չէ դեղաչափի համապատասխան ճշգրտում իրականացնելու համար:

Երիկամների կամ լյարդի հիվանդություններ ունեցող պացիենտներ

Զիրտեկ դեղի Ձեզ համապատասխան դեղաչափը կորոշի բժիշկը՝ հիմնվելով նախքան բուժումը սկսելը կատարվող արյան հետազոտությունների արդյունքների վրա: Երիկամային անբավարարության վերջին փուլում գտնվող պացիենտների շրջանում Զիրտեկ դեղի կիրառումը հակացուցված է (տես **«Մի օգտագործեք Զիրտեկ դեղը»** 2-րդ բաժնում):

Եթե Ձեր երեխան ունի երիկամների հիվանդություն, տեղեկացրեք այդ մասին բուժող բժշկին կամ դեղագետին, ովքեր կարող են դեղաչափի անհրաժեշտ ճշգրտումներ կատարել:

Ինչպես ընդունել Զիրտեկ դեղը
Դեղահատը պետք է կուլ տալ ամբողջական, մեկ բաժակ ջրով: Դեղահատը կարելի է կիսել՝ բաժանելով երկու հավասար դեղաչափերի:

Եթե դուք մոռացել եք ընդունել Զիրտեկ դեղը

Չի կարելի ընդունել կրկնակի դեղաչափ՝ բաց թողնված դեղաչափը լրացնելու նպատակով: Պարզապես հաջորդ դեղաչափն ընդունեք նախատեսված ժամին:

➔ **Եթե որևէ հարցում վստահ չեք**, դիմեք բուժող բժշկին կամ դեղագետին:

Եթե գերազանցել եք դեղաչափը՝ ավելի շատ դեղահատեր եք ընդունել, քան թույլատրելի է
Եթե Զիրտեկ դեղն ընդունել եք ավելի բարձր դեղաչափերով, ապա այդ մասին **տեղեկացրեք բուժող բժշկին կամ դեղագետին**: Հնարավորության դեպքում բժշկին կամ դեղագետին ցույց տվեք Զիրտեկ դեղի փաթեթը:
Եթե գերազանցել եք Զիրտեկ դեղի թույլատրելի դեղաչափը, ապա մեծ է հավանականությունը, որ Ձեզ մոտ կարող են ի հայտ գալ կողմնակի ազդեցություններ, օրինակ՝ գիտակցության մթագնում, փորլուծություն, գլխապտույտ, հոգնածություն, գլխացավ, տկարություն, բբի լայնացում, քոր, դրդվածություն, անդորր, քնկոտություն, ընդարմացում, անկանոն հաճախակի սրտխփոցը, տրեմոր և միզակապություն:

Եթե դուք դադարեցնում եք Զիրտեկ դեղի ընդունումը
Դեղի ընդունման դադարեցման դեպքում քիչ հավանականությամբ կարող է առաջանալ քոր (ուժեղ քոր) և(կամ) եղնջացան:
Եթե այս դեղի օգտագործման վերաբերյալ ունեք լրացուցիչ հարցեր, ապա դիմեք բուժող բժշկին կամ դեղագետին:

4. ԻՆՉՊԻՍԻ ԿՈՂՄՆԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՌԱՋԱՆԱԼ

Ինչպես բոլոր դեղերը, Զիրտեկ դեղը նույնպես կարող է առաջացնել կողմնակի ազդեցություններ, թեև ոչ բոլոր պացիենտների մոտ դրանք կարող են դրսևորվել:

Հատուկ ուշադրություն պահանջող վիճակներ
Ծանր ալերգիկ ռեակցիաներ. հնարավոր են հետևյալ դրսևորումները.

- քորով ուղեկցվող մաշկի ուռուցիկ ցան (եղնջացան),
- այտուցներ դեմքի կամ բերանի շրջանում (անոթանյարդային այտուց), կլման կամ շնչառության դժվարացում,
- կոլապս կամ գիտակցության կորուստ:

Միզակապություն. հնարավոր են հետևյալ դրսևորումները՝

- ցավոտ միզարձակում կամ միզելու անկարողություն (միզակապություն)

Ինքնասպանության մտքեր. Զիրտեկ դեղի կիրառման ընթացքում որոշ պացիենտներ ունեցել են ինքնասպանության մտքեր:

➔ **Անհապաղ դիմեք բժշկի,** եթե Ձեզ մոտ դրսևորվել է վերոնշյալ ախտանիշներից որևէ

մեկը: **Դադարեցրեք Զիրտեկ դեղի կիրառումը:**

Հաճախ հանդիպող կողմնակի ազդեցություններ (կարող են առաջանալ ոչ ավելի քան 10 պացիենտներից մեկի մոտ)՝

- քնկոտություն,
- գլխապտույտ, գլխացավ,
- ֆարինգիտ, ռինիտ (երեխաների շրջանում),
- փորլուծություն (երեխաների շրջանում), սրտխառնոց, բերանում չորություն,
- հոգնածություն:

Ոչ հաճախ հանդիպող կողմնակի ազդեցություններ (կարող են առաջանալ ոչ ավելի քան 100 պացիենտից մեկի մոտ)՝

- տագնապային դրդվածություն,
- պարեսթեզիա (ծակծկոց կամ թմրություն ձեռքերում և ոտքերում),
- փորլուծություն,
- ցավ որովայնի շրջանում,
- քոր, ցան,
- ասթենիա (անսովոր թուլության), տկարություն:

Հազվադեպ հանդիպող կողմնակի ազդեցություններ (կարող են առաջանալ ոչ ավելի քան 1000 պացիենտից մեկի մոտ)՝

- գերզգայունություն,
- ագրեսիա, գիտակցության մթագնում, ընկճված վիճակ, հալյուցինացիա, անքնություն,
- ցնցումներ,
- հաճախասրտություն (արագ սրտխփոց),
- լյարդի ֆունկցիայի շեղումներ (արյան հետազոտությունների արդյունքների հիման վրա),
- եղնջացան,
- այտուց (այտուցվածություն),
- քաշի ավելացում:

Շատ հազվադեպ հանդիպող կողմնակի ազդեցություններ (կարող են առաջանալ ոչ ավելի քան 10000 պացիենտից մեկի մոտ)՝

- արյան մեջ թրոմբոցիտների քանակի պակաս (թրոմբոցիտոպենիա),
- անաֆիլաքսային շոկ (տես «Ծանր ալերգիկ ռեակցիաներ» 4-րդ բաժնում),
- ջղաձգումներ (մարմնի անվերահսկելի շարժումներ),
- համի զգացողության խանգարում կամ կորուստ (դիսգեվզիա), ակամա շարժումներ (դիսկինեզիա), մկանային անհսկելի կծկումներ (դիստոնիա), ուշաթափություն (ուշագնացություն), տրեմոր,
- ակոմոդացիայի (աչքի հարմարեցումը մոտիկ/հեռու տեսողության համար) խանգարում, պղտոր տեսողություն, ակնագնդերի շարժում (աչքի անվերահսկելի

շրջանաձև շարժումներ),

- անոթանյարդային այտուց (ծանր ալերգիկ ռեակցիա, որն արտահայտվում է դեմքի կամ կոկորդի այտուցմամբ), դեղային կայուն էրիթեմա,
- ցավոտ միզարձակություն (դիզուրիա) (տես «Միզակապություն» 4-րդ բաժնում):

Այլ կողմնակի ազդեցություններ

Անհայտ հաճախականությամբ դիտվել են հետևյալ կողմնակի ազդեցությունները (առկա տվյալների հիման վրա հնարավոր չէ գնահատել հաճախականությունը)՝

- ախորժակի լավացում,
- ինքնասպանության մտքեր (տես «Ինքնասպանության մասին մտքեր» 4-րդ բաժնում),
- մղձավանջներ,
- հիշողության կորուստ (ամնեզիա), հիշողության խանգարում,
- գլխապտույտ (վերտիգո),
- լյարդի բորբոքում,
- միզակապություն (միզարձակման դժվարություն) (տես «Միզակապություն» 4-րդ բաժնում),
- հոդացավ,
- թարախային բշտերով ցան,
- ուժեղ քոր դեղի ընդունումը դադարեցնելուց հետո:

➔ **Տեղեկացրեք բուժող բժշկին կամ դեղագետին,** եթե վերոնշյալ որևէ կողմնակի ազդեցություն սրվում է կամ սկսում է անհանգստություն պատճառել, ինչպես նաև, եթե ի հայտ են գալիս կողմնակի ազդեցություններ, որոնք թվարկված չեն այս ներդիր-թերթիկում:

Կասկածելի կողմնակի ազդեցությունների վերաբերյալ հաղորդում

Կողմնակի ազդեցության ի հայտ գալու դեպքում այդ մասին տեղեկացրեք բժշկին կամ դեղագետին: Սա վերաբերում է նաև այս ներդիր-թերթիկում չնշված որևէ այլ կողմնակի ազդեցությանը: Դուք կարող եք կողմնակի ազդեցության մասին ուղղակիորեն առցանց հաղորդել ՀՀ ԱՆ ակադեմիկոս Է.Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն՝ հետևյալ հղումով. www.pharm.am կամ զանգահարել թեժ գիծ՝ հետևյալ հեռախոսահամարներով. (+374 10) 20 05 05 և (+374 96) 22 05 05:

Կողմնակի ազդեցությունների մասին հաղորդելով՝ դուք նպաստում եք այս դեղի անվտանգության վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության ապահովմանը:

5. ԻՆՉՊԵՍ ՊԱՀԵԼ ԶԻՐՏԵԿ ԴԵՂԸ

Մի պահեք Զիրտեկ դեղը 30°C-ից բարձր ջերմաստիճանի պայմաններում:

Զիրտեկ դեղը պահեք երեխաների համար անտեսանելի և անհասանելի տեղում:

Մի օգտագործեք դեղը տուփի վրա նշված պիտանիության ժամկետի ավարտից հետո:

Դեղերը չի կարելի նետել կոյուղի կամ կենցաղային թափոնների մեջ: Չօգտագործված դեղերի հետ վարվելու մասին հարցրեք դեղագետին: Այս միջոցառումներն ուղղված են շրջակա միջավայրի պահպանությանը:

6. ԻՆՉ Է ՊԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԴԵՂԻ ՓԱԹԵԹԸ ԵՎ ԱՅԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ինչ է պարունակում Զիրտեկ դեղը

Զիրտեկ դեղի ակտիվ բաղադրատարրը ցետիրիզինի դիհիդրոքլորիդն է:
Զիրտեկ դեղի յուրաքանչյուր թաղանթապատ դեղահատը պարունակում է 10 մգ ցետիրիզինի դիհիդրոքլորիդ:

Օժանդակ նյութեր՝ միկրոբյուրեղային ցելյուլոզա, լակտոզայի մոնոհիդրատ, կոլոիդային անջուր սիլիցիումի երկօքսիդ, մագնեզիումի ստեարատ:
Դեղահատի թաղանթը պարունակում է՝ հիդրօքսիպրոպիլմեթիլցելյուլոզա (E464), տիտանի երկօքսիդ (E171), մակրոգոլ 400:

Ինչ տեսք ունեն Զիրտեկ դեղահատերը և ինչ է պարունակում փաթեթը

Պոլիվինիլքլորիդ/ալյումինե փայլաթիթեղից պատրաստված շրջագծված բնիկավոր բլիստերը պարունակում է 7 թաղանթապատ դեղահատ:
Ստվարաթղթե տուփի մեջ տեղադրված է 1 շրջագծված բնիկավոր բլիստեր՝ ներդիր-թերթիկի հետ միասին:

Գրանցման հավաստագրի իրավատեր և արտադրող

Գրանցման հավաստագրի իրավատեր

ԳլաքսոՍմիթԿլայն Էքսպորտ Լտդ
Միացյալ Թագավորություն, ՏՎ8 9ԳՍ, Միդլեսեքս, Բրենտֆորդ, 980 Գրեյթ Վեստ Ռոուդ,

Արտադրող
Աեսիկա Ֆարմասյուտիկալս Ս.ռ.լ.
Իտալիա, 15-10044 Պիանեզա (SO), Վիա Պրագլիա

Տեքստի վերանայման ամսաթիվ
29.04.2020թ.